ՏԵՂԵԿԱՆՔ

Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան գործողությունների երկրորդ ծրագրի պարտավորությունների 6-րդ (Կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով միկրոհարցումների անցկացում) և 11-րդ (20000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում) կետերով նախատեսված պահանջների կատարման ուղղությամբ ՀՀ համայնքներում իրականացված աշխատանքների վերաբերյալ
(30.06.2016թ.դրությամբ)

Կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով միկրոհարցումների անցկացում

1.Համաձայն ՀՀ մարզպետարաններից ստացված տեղեկատվության՝ 2016թ.-ի հունիսի 30-ի դրությամբ,կարճ հաղորդագրությունների (SMS) միջոցով միկրոհարցումներ են անցկացվել ՀՀ թվով 9համայնքներում՝ Արագածոտնի մարզի Աշտարակ, Սյունիքի մարզի Գորիս, Շիրակի մարզի Գյումրի և Արեգնադեմ, Կոտայքի մարզի Եղվարդ, Բյուրեղավան, Քասախ, Ջրվեժ ևԱրզականհամայնքներում:

2. Գործընթացին առնչվող՝ մարզպետարաններից ստացված փաստաթղթերը կցվում են:

3.Այս հանձնառության իրականացման համար պետական բյուջեից գումարներ չեն նախատեսվել: Կոտայքի մարզի վերոնշյալ համայնքների կողմից միկրոհարցումներն իրականացվել են համայնքային բյուջեների հաշվին:SMS հաղորդագրությունների ձևավորման և դրանց՝ հաճախորդներին առաքման ծառայություններ ստանալու նպատակով համայնքները համապատասխան պայմանագրեր (կցվում են) են կնքել բջջային հեռախոսակապի ցանցի օպերատորների («Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ և «Նիկիտա մոբայլ» ՍՊԸ) հետ:

Բացի այդ՝ Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում իրականացման փուլում են համայնքային միկրոհարցումների անցկացումը՝ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի «Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում» ծրագրի կողմից առաջարկված մեթոդաբանությամբ: Այս բաղադրիչի շրջանակներում ընդգրկված են Սյունիքի մարզի Տաթև խոշորացված համայնքը, ինչպես նաև առաջիկա խոշորացման ծրագրերում ներառված՝ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ և Գնդեվազ, Սյունիքի մարզի Գորիս, Ակներ, Բարձրավան, Խնձորեսկ, Հարթաշեն, Ներքին Խնձորեսկ, Շուռնուխ, Որոտան, Վերիշեն և Քարահունջ համայնքները: Ծրագրի այս բաղադրիչը մինչև 10 000 (տասը հազար)

ԱՄՆ դոլարի չափով ֆինանսավորվում է Շվեյցարիայի համագործակցության և զարգացման գործակալության կողմից:

4. Միկրոհարցումների արդյունքները հրապարակվել են համայնքների համացանցային կայքերում:

5. Հանձնառության ամբողջական իրականացմանը խոչընդոտող հիմնական խնդիրը համայնքային բյուջեներում անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունն է:

20000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովում

1.2016թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 20 000 և ավելի բնակչություն ունեցող 17 համայնքներ արդեն ստացել են ավագանու նիստերի, հանրային քննարկումների և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակման ապահովմանն անհրաժեշտ սարքավորումների մի մասը (միացման համար անհրաժեշտ օժանդակ սարքեր, հիշողության քարտեր): Սարքավորումների մնացած մասը, համաձայն մատակարարների հետ արդեն իսկ կնքված պայմանագրերի, ծրագրում ընդգրված համայնքներին կտրամադրվեն հուլիս ամսվա ընթացում:

Այս հանձնառության իրականացմանը ֆինանսական օժանդակություն է ցուցաբերվում Եվրոպային խորհրդի «ԱջակցությունՀայաստանումտեղականժողովրդավարությանամրապնդմանը» ծրագրի շրջանակներում:

2. Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքի տրամադրվելու ենստորև թվարկված հիմնականսարքավորումները.

Հ/Հ	**Անվանումը**	**Քանակը**	**Միավորի գինը /ՀՀ դրամ/**
1.	Տեսախցիկ	1	253 000
2.	Միկրոֆոն	1	36 750
3.	Հիշողության քարտ (32 GB)	1	6350
4.	Համակարգիչ, ստեղնաշար, մկնիկ, լիցենզիոն օպերացիոն համակարգ	1	423 360
5.	Մոնիտոր	1	74970
6.	Առցանց հեռարձակման համար նախատեսված	1	33 810

	ծրագրային ապահովում՝ vMix		

3.20 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքներում ստեղծվել են համայնքային կայքեր, որոնց բովանդակությունը կանոնավոր կերպով թարմացվում է: Ստորև ներկայացված աղյուսակում տրված են այդ կայքերի հղումները.

1.	Գյումրի	gyumricity.am
2.	Վանաձոր	vanadzor.am
3.	Հրազդան	hrazdan.am
4.	Աբովյան	abovyan-kotayk.am
5.	Էջմիածին	ejmiatsin.am
6.	Կապան	kapan.am
7.	Արմավիր	mer.armavir.am
8.	Գավառ	gavariqaghaqapetaran.am
9.	Չարենցավան	charentsavan.am
10.	Արտաշատ	artashat.am
11.	Սևան	sevancity.am
12.	Աշտարակ	ashtarak.am
13.	Մասիս	masiscity.am
14.	Գորիս	goriscity.am
15.	Ալավերդի	alaverdi.am
16.	Արթիկ	artik.am
17.	Դիլիջան	dilijancity.am

4. Համայնքային կայքերի կանոնավոր շահագործման անհրաժեշտությունից ելնելով՝ վերոնշյալ 17 համայնքապետարանների աշխատակիցները պարբերաբար վերապատրաստվել են:

4. 2016թ.-ի հունիսի 30-ի դրությամբ 20 000 և ավելի բնակչություն ունեցող Գյումրի, Վանաձոր, Հրազդան և Արմավիր համայնքներում ապահովված է ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակումը: Մնացած համայնքները անհրաժեշտ սարքավորումների մնացած մասը կստանան հուլիս ամսվա ընթացքում: Օգոստոս ամսին

համայնքներում կիրականացվեն համակարգերի տեղադրման աշխատանքները, այնուհետ՝ համայնքների տեխնիկական մասնագետների վերապատրաստումը: Հաշվի առնելով վերը թվարկված համայնքներում պահանջվող արագությամբ համացանցային կապի առկայությունը, կարծում ենք, որ սեպտեմբեր ամսից արդեն համայնքները կսկսեն առցանց հեռարձակումները:

5. Այս հանձնառության լիարժեք իրականացմանը խոչընդոտող խնդիրը՝որոշ համայնքներումավագանու նիստերի անցկացման համար նախատեսված և բավարար հարմարավետությամբ օժտված առանձին աշխատասենյակի բացակայությունն է: